**«Հաստատված է՝»**
**ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոնի 31.08.2020 թ-ի նիստում, արձանագրություն թիվ 1**
**ամբիոնի պետ՝ ոստիկանության գնդապետ Մ.Սեմերջյան**

# ՀՀ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐ
# ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| **ԱՌԱՐԿԱՅԻ ԱՆՎԱՆՈՒՄ** | | Ընտանիքում բռնության և անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելումը |
| | | |
| **ԱՌԱՐԿԱՅԻ ԴԱՍԻՉ** | | |
| | | |
| **ՖԱԿՈՒԼՏԵՏ** | | Իրավագիտություն, առկա անվճար ուսուցում |
| | | |
| **ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ** | | Իրավագիտություն |
| | | |
| **ԱՄԲԻՈՆ** | | Օպերատիվ-հետախուզական գործունեության և քրեագիտության ամբիոն<br>E-mail: OHGKRIM@mail.ru |
| | | |
| **ՀԵՂԻՆԱԿ/ՆԵՐ** | | Ա.Սահակյան հեռ.093-19-19-83<br>E-mail: alexandersahakyan60@gmail.com |
| | | |
| **ՈՒՍՏԱՐԻ/ԿԻՍԱՄՅԱԿ** | | 4-րդ կուրս, 1-ին կիսամյակ |
| | | |
| **ԿՐԹԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆ** | | Բակալավր |

| | | |
|---|---|---|
| **ԿՐԵԴԻՏՆԵՐ** | | 3 (երեք) |
| | | |
| **ԴԱՍԱԺԱՄԵՐԻ ԲԱՇԽՈՒՄ ԵՎ ՍՈՎՈՐՈՂՆԵՐԻ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՁԵՎԵՐԸ** | | «Ընտանիքում բռնության և անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելումը» դասընթացի ընդհանուր ծավալը կազմում է 90 ժամ, որից 20 ժամ դասախոսություն, 16 ժամ սեմինար, 12 ժամ գործնական, 42 ժամ ինքնուրույն աշխատանք:<br>Ինքնուրույն աշխատանքի համար նախատեսված ժամերին սովորողը կատարում է գրականության ընթերցում և մշակում, վերլուծական, հետազոտական աշխատանք, դասախոսի հանձնարարությամբ կարող է գրել ռեֆերատներ և էսսեներ, պատրաստվում է հաջորդ դասին: Լսարանային դասերը կայանում են շաբաթը երկու անգամ՝ 80 րոպե տևողությամբ: Դասընթացն ավարտվում է կիսամյակի վերջում ստուգարքով: |
| | | |
| **ՄՈՒՏՔԱՅԻՆ ՊԱՀԱՆՋՆԵՐ** | | Դասընթացը կառուցվում է «Պետության և իրավունքի տեսություն», «Իրավապահ մարմիններ», «ՀՀ քրեական իրավունք», «ՀՀ վարչական իրավունք», «Մանկավարժությունը և հոգեբանությունը ոստիկանության աշխատակիցների գործունեության մեջ», «Ոստիկանության վարչական գործունեություն» և «Քրեաբանություն» դասընթացների իմացության վրա: |
| | | |
| **ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ** | | «Ընտանիքում բռնության եվ անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելումը» դասընթացի շրջանակներում ուսումնասիրվում են անչափահասների գործերով արդարադատության հանակարգը, իրավախախտումները ծնող պատճառներն և պայմանները, հոգեբանական և տարիքային առանձնահատկությունները, անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման (մասնագիտացված) ստորաբաժանումների կողմից իրականացվող կանխարգելիչ աշխատանքները, հաշվառումները, ընտանիքի դերը կանխարգելիչ աշխատանքներում, ընտանիքում բռնության հասկացությունը, |

| | | |
|---|---|---|
| | | տեսակները և պաշտպանության միջոցները: |
| | | |
| **ՆՊԱՏԱԿ**<br><br>**ԽՆԴԻՐ/ՆԵՐ** | | Դասընթացի նպատակն է սովորողներին հաղորդել գիտելիքներ անչափահասների գործերով արդարադատության համակարգի, հոգեբանական և տարիքային առանձնահատկությունների, անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների և դրանց ծնող պատճառների ու պայմանների, մասնագիտացված ստորաբաժանումների կողմից իրականացվող կանխարգելիչ աշխատանքների, անչափահասների հետ տարվող աշխատանքներում մասնագիտացված ստորաբաժանումների գործառույթների և ընտանիքում բռնություն գործադրած անձի հետ տարվող աշխատանքի առանձնահատկությունների վերաբերյալ:<br><br>Դասընթացի խնդիրներն են<br>1) ներկայացնել անչափահասների գործերով արդարադատության համակարգը,<br>2) ուսումնասիրել իրավախախտ անչափահասի հոգեբանական և տարիքային փուլերի առանձնահատկությունները,<br>3) ներկայացնել իրավախախտ անչափահասների և երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող գործոնները,<br>4) ներկայացնել ոստիկանության՝ մասնագիտացված ստորաբաժանումների ծառայողի (իրավասու ծառայողի) իրավասությունները,<br>5) ներկայացնել ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների դպրոցական տեսուչների իրավասությունները,<br>6) ծանոթացնել ընտանիքում բռնության հասկացությանը, տեսակներին և պաշտպանության միջոցներին:<br>7) ներկայացնել ընտանիքում բռնություն գործադրած անձի հետ տարվող աշխատանքի առանձնահատկությունները,<br>8) ներկայացնել կանխարգելիչ քարտերի կազմումը, վարումը և դադարեցումը,<br>9) ներկայացնել անչափահասների հետ շփման ուղիները |
| | | |
| **ԿՐԹԱԿԱՆ ԵԼՔԱՅԻՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ**<br><br>***Կարողանա՝*** | | 1) ներկայացնել անչափահասների գործերով արդարադատության համակարգը,<br>2) ներկայացնել անչափահասների հետ տարվող աշխատանքներում ոստիկանության մասնագիտացված ստորաբաժանումների ծառայողների գործառույթները,<br>3) տիրապետել անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելման մեկնաբանման մեթոդաբանությանը,<br>4) ներկայացնել ոստիկանության՝ մասնագիտացված ստորաբաժանումների ծառայողի (իրավասու ծառայողի) իրավասությունները,<br>5) ներկայացնել ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների դպրոցական տեսուչների իրավասությունները,<br>6) ներկայացնել իրավախախտ անչափահասներին կանխարգելիչ հաշվառման վերցնելու հիմքերը,<br>7) ներկայացնել ընտանիքում բռնության հասկացությունը և դրա տեսակները՝ ֆիզիկական, սեռական, հոգեբանական, տնտեսական և անտեսում,<br>8) ներկայացնել ընտանիքում բռնության հասկացությունը, տեսակները և պաշտպանության միջոցները:<br>9) ներկայացնել ընտանիքում բռնություն գործադրած անձի հետ տարվող աշխատանքի առանձնահատկությունները |

| ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ | | |
|---|---|---|
| | | |
| **Հիմնական** | | 1) ՀՀ Սահմանադրություն<br>2) ՀՀ օրենքը երեխայի իրավունքների մասին, 1996<br>3) ՀՀ ընտանեկան օրենսգիրք, 2004<br>4) ՀՀ քրեական օրենսգիրք, 2003<br>5) ՀՀ օրենքը ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգման մասին, 2017<br>6) ՀՀ օրենքը առանց ծնողական խնամքի մնացած երեխաների սոցիալական պաշտպանության մասին, 2002թ<br>7) ՀՀ օրենքը կրթության մասին 1999թ |
| | | |
| **Լրացուցիչ** | | 1) «Անհետաձգելի միջամտության և պաշտպանական որոշումների համապատասխան պահանջների կատարման նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը սահմանելու մասին» ՀՀ ոստիկանության պետի 17.07.2019թ. թիվ 14-Լ հրաման<br>2) «ՀՀ Կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության տարածքային ստորաբաժանումների անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման բաժանմունքներում (խմբերում) ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի 17.07.2019թ. թիվ 15-Լ հրաման<br>3) «Ընտանիքում բռնության դեպքերի արձագանքման և բռնության ենթարկված անձանց հետ իրականացվող աշխատանքների արդյունավետության բարձրացման մասին» ՀՀ ոստիկանության պետի 17.07.2019թ. թիվ 16-Լ հրաման<br>4) «Ընտանիքում բռնություն գործադրած անձի նկատմամբ նախազգուշացման և անհետաձգելի միջամտության որոշումների ձևերը սահմանելու մասին» ՀՀ ոստիկանության պետի 17.07.2019թ. թիվ 17-Լ հրաման<br>5) «Ընտանիքում բռնության կրկնման կամ շարունակման անմիջականորեն սպառնացող վտանգի գնահատման չափորոշիչները հաստատելու մասին» ՀՀ ոստիկանության պետի 17.07.2019թ. թիվ 18-Լ հրաման<br>6) «ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով ծառայության դպրոցական տեսուչների գործառույթները հաստատելու և ՀՀ ոստիկանության պետի առաջին տեղակալի 2013 թվականի մայիսի 20-ի թիվ 1600-Ա հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ ոստ. պետի առաջին տեղակալի 04.04.2014թ-ի թիվ 1090-Ա հրաման:<br>7) «Անչափահասների գործերով տեսչությունների աշխատանքները կազմակերպելու ժամանակավոր հրահանգի հաստատման մասին» ՀՀ ՆԳ նախարարի 08.08.1996թ-ի թիվ 633 հրաման.<br>8) Հրահանգ-ուղեցույց անչափահասի վարքի նախնական ուսումնասիրման և գնահատման գործիքի կիրառման: Թումասյան Դ.,Գասպարյան Ա., Խաչատրյան Ա. Երևան, Ասողիկ 2017:<br>9) Ընտանեկան բռնություն: Ձեռնարկ ոստիկանների համար: Կազմ.՝ Կարապետյան Ծ.: Երևան, 2015<br>10) Դուրյան Ն.: Անչափահասների արդարադատությունը ՀՀ-ում: Երևան, 2014:<br>11) Ձեռնարկ ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով աշխատակիցների համար: Կազմ.՝ Դուրյան Ն.: Երևան, 2005: |

| | | |
|---|---|---|
| | | 12) Երեխաների իրավունքներին առնչվող ՀՀ օրենքների և ՀՀ այլ իրավական ակտերի ժողովածու: Երևան, 2005:<br>13) Ваш проблемный подросток: Учебное пособие. –СПб., 1998<br>14) Монахова А.Х. Психолог и семья: активные методы взаимодействия. Ярославль, 2002<br>15) Плинер Я.Г., Бухвалов В.А. Воспитание личности в коллективе. – М.,2000<br>16) Соколов Я.В., Миньковский Г.М. Ответственность за правонарушения. Пособие по курсу «Граждановедение» для учащихся, их родителей и учителей. –М., 1995 |
| | | |

| | | | |
|---|---|---|---|
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԸ ԵՎ ԿՇԻՌ** | | Ընթացիկ ստուգման ձևը ստուգարք | |
| | | | |
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿ** | | Գնահատման արդյունարար Միավոր | Գնահատականը տառանշումով |
| | | | ստուգված |
| | | | չստուգված |
| | | | չներկայացած |
| | | | |
| **ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐ / ՄԵԽԱՆԻԶՄՆԵՐ** | | Սովորողը դասընթացից կարող է հանդես բերել մինչև 100% (ստուգված) առաջադիմություն:<br>Սովորողների գիտելիքները, ունակությունները և հմտությունները գնահատվում են «Գերազանց», «Լավ», «Բավարար» և «Անբավարար» կամ «Ստուգված» կամ «Չստուգված»:<br>Սովորողների գիտելիքները գնահատվում են հետևյալ չափանիշներով՝<br>ա) «Գերազանց», եթե սովորողը խոր և հիմնավոր է յուրացրել ամբողջ ծրագրային նյութը, սպառիչ, հաջորդական, գրագետ ու տրամաբանորեն կառուցված է շարադրում այն, նյութը սերտորեն կապում է ոստիկանության ծառայության խնդիրների հետ, չի դժվարանում պատասխանել, երբ ձևափոխվում է առաջադրանքը, ազատորեն լուծում է խնդիրներն ու կատարում գործնական առաջադրանքները, ճիշտ է հիմնավորում ընդունած որոշումները, ընդունակ է ինքնուրույն ընդհանրացնել և շարադրել նյութը՝ սխալներ թույլ չտալով.<br>բ) «Լավ», եթե սովորողը հիմնավոր գիտի ծրագրային նյութը, գրագետ է և ըստ էության շարադրում է այն, հարցին պատասխանելիս թույլ չի տալիս էական անճշտություններ, կարողանում է ճիշտ կիրառել տեսական դրույթները, գործնական առաջադրանքները կատարելիս տիրապետում է անհրաժեշտ ունակությունների ու հմտությունների.<br>գ) «Բավարար», եթե սովորողը յուրացրել է միայն հիմնական նյութը, բայց չգիտի դրա առանձին մանրամասները, թույլ է տալիս անճշտություններ, ոչ ճիշտ ձևակերպումներ, խախտում է ուսումնական նյութի շարադրման հաջորդականությունը և դժվարանում է կատարել գործնական առաջադրանքները.<br>դ) «Անբավարար», եթե սովորողը չգիտի ծրագրային նյութի զգալի մասը, թույլ է տալիս էական սխալներ, չի կարողանում կատարել գործնական առաջադրանքներն ու լուծել խնդիրները: | |
| | | | |
| **ԱՅԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ** | | | |
| | | Դասապլանի որևէ փոփոխություն նախօրոք կտեղեկացվի սովորողին: | |

| | | |
|---|---|---|
| **Ներկայություն** | | Սովորողի դասերին ներկայությունը բխում է նրա իսկ շահերից, քանի որ ներկայությունը ենթադրում է ունկնդրում, մասնակցություն քննարկումներին, չհասկացված կամ վատ հասկացված խնդիրների պարզաբանում, ինքնուրույն և գործնական աշխատանքների հանձնում: Սովորողն այս դեպքում հնարավորություն է ունենում լսել ոչ միայն ծրագրային նյութը, այլև մասնակցել քննարկումներին, բանավեճերին, անել ինքնուրույն դատողություններ և հայտնել սեփական տեսակետը: |
| **Գրավոր աշխատանքներին ներկայացվող պահանջներ** | | Գրավոր աշխատանքների ժամանակ արգելվում է ծածկագրերից օգտվելը: Ծածկագրի հայտնաբերման դեպքում աշխատանքը գնահատվում է զրո միավոր: |
| **Ինքնուրույն և գործնական աշխատանքներ** | | Ինքնուրույն և գործնական աշխատանքները անհրաժեշտ է կատարել առանց կողմնակի միջամտության և հանձնել սահմանված ժամանակահատվածում:<br>Ինքնուրույն աշխատանքում արգելվում է գրագողությունը: Այլոց մտքերը օգտագործելու դեպքում սովորողը պարտավոր է նշել աղբյուրը ըստ ընդունված ակադեմիական ձևաչափի: |

# ԱՌԱՐԿԱՅԻ ԹԵՄԱՏԻԿ ՏՐՈՀՈՒՄ

| **Թեմա 1**<br>**Անչափահասների գործերով արդարադատության համակարգը**<br>**(2 ժամ դասախոսություն)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Անչափահասների գործերով արդարադատության հասկացությունը:<br>2. Անչափահասների գործերով արդարադատության սկզբունքները:<br>3. Անչափահասների արդարադատության իրավական գործիքները: | Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը: |

| **Թեմա 2**<br>**Անչափահասների հանցավորությունը**<br>**(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Իրավախախտումներ կատարած անչափահասի բնութագրական առանձնահատկությունները:<br>2. Անչափահասների հանցավորության առանձնահատկությունները: | Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք. սովորողները ծանոթանում են գրականությանը:<br>Հարցեր 1-2 սեմինար պարապմունք. |

| **Թեմա 3**<br>**Անչափահասների զարգացման տարիքային և հոգեբանական առանձնահատկությունները**<br>**(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Անչափահասների զարգացման տարիքային փուլերի առաննահատկությունները:<br>2. Անչափահասների հոգեբանական առանձնահատկությունները:<br>3. Դեվիանտ (շեղվող) վարքի բնորոշումը, տարատեսակներն ու հոգեբանական առանձնահատկությունները: | Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1-3 ինքնուրույն աշխատանք: Սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:<br>Հարցեր 1-3 սեմինար պարապմունք. |

| **Թեմա 4**<br>**ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների կողմից իրականացնող պրոֆիլակտիկ աշխատանքների առանձնահատկությունները**<br>**(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար, 4 ժամ գործնական)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների կողմից իրականացվող պրոֆիլակտիկ աշխատանքների բնույթը, էությունը և նշանակությունը:<br>2. Իրավախախտ անչափահասների հետ տարվող անհատական պրոֆիլակտիկ աշխատանքները: | Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1-2 սեմինար պարապմունք. խնդրահարույց հարցերի քննարկում:<br>Հարց 2 սովորողները դասախոսի օգնությամբ կազմում են պրոֆիլակտիկ |

| | |
|---|---|
| | քարտերի փաստաթղթերը:<br>Հարց 2 սովորողները դասախոսի օգնությամբ կազմում են պրոֆիլակտիկ գործերի փաստաթղթերը: |

| **Թեմա 5**<br>**ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների դպրոցական տեսուչների դերը անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների պրոֆիլակտիկ աշխատանքներում**<br>**(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար, 2 ժամ գործնական)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների դպրոցական տեսուչի կողմից իրականացվող պրոֆիլակտիկ աշխատանքի խնդիրները:<br>2. ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների դպրոցական տեսուչի գործառութային պարտականությունները: | Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն խմբային քննարկման ձևով, որտեղ առանձնակի ուշադրություն է դարձվում սովորողների կողմից ներկայացված խնդրահարույց հարցերին:<br>Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք քննարկման ձևով:<br>Հարց 2 սովորողները դասախոսի օգնությամբ կազմում են պրոֆիլակտիկ հաշվառման քարտի փաստաթղթերը: |

| **Թեմա 6**<br>**Ընտանիքի դերը անչափահասների դաստիարակության գործում**<br>**(2 ժամ դասախոսություն, 2 ժամ սեմինար)** | |
|---|---|
| **Թեմայի հարցերը** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Ընտանեկան դաստիարակությունը որպես միջոց՝ անչափահասների շրջանում իրավախախտումների կանխման գործում:<br>2. Ընտանեկան դաստիարակության անբարենպաստ պայմանները: | Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն:<br>Հարցեր 1-2 ինքնուրույն աշխատանք: Սովորողները ծանոթանում են գրականությանը՝ տվյալ հարցերի վերաբերյալ ավելի խորը գիտելիքներ ձեռք բերելու համար:<br>Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք, ստուգվում է սովորողների գիտելիքները: |

| **Թեմա 7**<br>**Ընտանիքում բռնություն գործադրած անձանց կանխարգելիչ հաշվառման վերցնելու կարգը**<br>**(4 ժամ դասախոսություն, 4 ժամ սեմինար, 4 ժամ գործնական)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Ընտանիքում բռնության հասկացությունը, տեսակները և պաշտպանության միջոցները:<br>2. Ընտանիքում բռնություն գործադրած չափահաս անձի կանխարգելիչ հաշվառումը:<br>3. Ընտանիքում բռնություն գործադրած անչափահաս անձի կանխարգելիչ հաշվառումը: | Հարցեր 1-3 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1-3 անցկացվում է սեմինար պարապմունք:<br>Հարց 2-3 սովորողները դասախոսի օգնությամբ կազմում են կանխարգելիչ հաշվառման քարտի փաստաթղթերը: |

| **Թեմա 8**<br>**Անչափահասի հետ շփման առանձնահատկությունները**<br>**(2 ժամ դասախոսություն, 2 ժամ գործնական)** | |
|---|---|
| **Թեմայի հարցեր** | **Դասավանդման և գնահատման մեթոդաբանություն** |
| 1. Անչափահասի հետ շփման ուղիները:<br>2. Անչափահասի հետ շփման ընթացքում վստահության մթնոլորտ ձևավորելու ընդհանուր ուղիները: | Հարցեր 1-2 անցկացվում է դասախոսություն՝ սովորողների ուշադրությունը հրավիրելով խնդրահարույց հարցերի վրա:<br>Հարցեր 1-2 անցկացվում է սեմինար պարապմունք (սեմինարը կարող է անցկացվել խմբային քննարկման միջոցով):<br>Հարց 1-2 սովորողները դասախոսի օգնությամբ խաղերի միջոցով ծանոթանում են ընտանեկան բռնությունների եղանակներին: |

# Հ Ա Ր Ց Ա Շ Ա Ր

«Ընտանիքում բռնության եվ անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների կանխարգելումը» առարկայից ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի առկա ուսուցման բակալավրիատի 4-րդ կուրսի ստուգարքի

1. Անչափահասների գործերով արդարադատության հասկացությունը:
2. Անչափահասների գործերով արդարադատության սկզբունքները:
3. Անչափահասների արդարադատության իրավական գործիքները:
4. Անչափահաս իրավախախտի բնութագիրը:
5. Անչափահասների զարգացման տարիքային փուլերի առաննահատկությունները:
6. Անչափահասների հոգեբանական առանձնահատկությունները:
7. Դեվիանտ (շեղվող) վարքի բնորոշումը, տարատեսակներն ու հոգեբանական առանձնահատկությունները:
8. ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների աշխատանքների նշանակությունը:
9. Ընդհանուր պրոֆիլակտիկ աշխատանքները:
10. Իրավախախտ անչափահասների հետ տարվող անհատական պրոֆիլակտիկ աշխա-տանքները:
11. Պրոֆիլակտիկ հաշվառումների հասկացությունը և խնդիրները:
12. Պրոֆիլակտիկ գործերի կազմումը, վարումը և դադարեցումը:
13. Պրոֆիլակտիկ քարտերի կազմումը, վարումը և դադարեցումը:
14. ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների դպրոցական տեսուչների պրոֆիլակտիկ աշխատանքի ընդհանուր խնդիրները:
15. ՀՀ ոստիկանության անչափահասների գործերով և ընտանիքում բռնության կանխարգելման ստորաբաժանումների դպրոցական տեսուչների գործառութային պարտականությունները:
16. Ընտանեկան դաստիարակությունը որպես միջոց՝ անչափահասների շրջանում իրավախախտումների կանխման գործում:
17. Ընտանեկան դաստիարակության անբարենպաստ պայմանները:
18. Անչափահասների կողմից կատարվող իրավախախտումների պատճառներն ու պայմանները:
19. Երեխաների վրա բացասական ներգործություն ունեցող ծնողների և ընտանիքների հայտնաբերումը և նրանց նկատմամբ անցկացվող կանխարգելիչ աշխատանքները:
20. Ընտանիքում բռնություն գործադրած անչափահասի հետ տարվող աշխատանքի առանձնահատկությունները:
21. Ընտանիքում բռնության հասկացությունը, տեսակները և պաշտպանության միջոցները:
22. Ընտանիքում բռնություն գործաադրած չափահաս անձի կանխարգելիչ հաշվառումը:
23. Ընտանիքում բռնություն գործաադրած անչափահաս անձի կանխարգելիչ հաշվառումը:
24. Կանխարգելիչ հաշվառումների հասկացությունը և խնդիրները:

25. Կանխարգելիչ քարտերի կազմումը, վարումը և դադարեցումը:
26. Անչափահասների հետ հարցազրույց անցկացնելու ընդհանուր ուղենիշները:
27. Անչափահասի հետ հարցազրույցի ընթացքում վստահության մթնոլորտ ձևավորելու ընդհանուր ուղենիշները: